



Իրավունքի զարգացման և պաշտպանության հիմնադրամ

Հասցե՝ 0010, ք. Երևան, Վարդանանց փակուղի 8, տարածք 3

Էլ. հասցե՝ ldpf.foundation@gmail.com

Կարծիք

«Անգործունակության ինստիտուտին առնչվող իրավակարգավորումների վերանայման և աջակցության միջոցով որոշումների կայացման մեխանիզմի ներդրման գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» Կառավարության որոշման նախագծի վերաբերյալ

02.11.2022 թ.-ին Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքում քննարկման է ներկայացվել «Անգործունակության ինստիտուտին առնչվող իրավակարգավորումների վերանայման և աջակցության միջոցով որոշումների կայացման մեխանիզմի ներդրման գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» Կառավարության որոշման նախագիծը (այսուհետ՝ նաև Նախագիծ)¹:

Դրական գնահատելով և խիստ կարևորելով Նախագիծն ընդհանուր առմամբ՝ առաջարկում ենք դրանում տեղ գտած 1-ին գործողության շրջանակում որպես վերանայման եթևակա օրենսդրություն ներառել նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքը՝ հաշվի առնելով այն, որ դրանում առկա են որոշ իրավակարգավորումներ, որոնք սահմանափակում են վարույթի մասնավոր մասնակից հանդիսացող անգործունակ կամ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց՝ նաև անձամբ իրենց իրավունքները և շահերը ներկայացնելու իրավունքը (օրինակ՝ օրենսգրքի 50-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է. *«Անչափահաս, անգործունակ կամ հոգեկան առողջության խնդիր ունեցող տուժողի իրավունքները սույն օրենսգրքով սահմանված կարգով նրա փոխարեն իրականացնում է նրա օրինական ներկայացուցիչը»*):

¹ <https://www.e-draft.am/projects/4923/about>